

ԲԱՇՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

— ԲՈՒՆԱԾՈՒՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲՈՒՋՅԱԿԱՆ —

ԹՅՀ-ԹՅՀ

ՀԱՅՈՐ

2



Ս. ՀԱՅԱՐ

1923

ՆՈՅԵՄԲՐԵՐ

Թիւ 11

ԲՈՒՆԱԾՈՒՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՀԱՅԳԻՐ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

Ս. Ղազարու Ձեռագրատան իլլ. թայս-
մաւորքը Հոռի ամսոյն Զ օրուան մէջ կը
կարգէ ևս «Վկայաբանութիւն սրոց մար-
տիրուացն, որ եղեն ի Մահմետայ ի ձ
և կ թուականին $160 = 711$ » և կը պատ-
մէ այսպէս.

« Յուստիանոս կայսրն Հոռոմոց (հա-
« լածեաց զազս Հայոց) վասն ուղղափառ
« հաւատոյս ընդ ամենայն տեղիս իշխանու-
« թեանն իւրոյ: Եւ ուրախացեալ տաճկացն
« բնակեցուցին զնոսա ի Մելտինի և ի
« Միջագետս Ասորոց: Ընդ որս ուրախա-
« ցեալ ասորիցն ուղղափառք, որ կոչին
« յակորիկ: Զի մին դաւանութեամբն եղեն
« միմեանց ջատագովք և ամբութիւն հայր
« և ասորից վասն ուղղափառ հաւատոյս:
« Եւ եղեւ այս ի ժամանակս Վոլիթայ
« իշխանին Ցանկաց: Եւ պատումք ի Ցան-
« կաց միաբանեցան ուղղափառ ամբութիւն հայր
« Հայոց և Ասորոց: Բայց

« Մահմետ, ոչ առաջինն, այլ յետինն,
« զմնեայ և արինանախանձն: Զի առա-
« ջինն, որ պատգամարեր կոչեցաւ ի
« նոցունց, նա կիսաքրիստոնեայ էր աշա-
« կերտեալ ի Բիսիրայէ արիանոսականէ:
« Նա ինայեաց ի քրիստոնեայս և երարծ
« զուրբն Քաղրթի: Զի Քաղրթն այն
« զօրավարն Ցանկաց և Մուհմատն նմա-
« խալիֆայ և Փաղամբար առասպելարա-
« նութեամբ: Եւ Քաղրթ զօրավարն ել
« ի Մաքայու խրատովն և խորհրդակցու-
« թեամբն Մուհմատայ էտո զեղիպտոս և
« զՄբանդարիայ: Եւ եկեալ յերուաղէմ
« էտո զնա և զամենայն քաղաքս նորա:
« Ասին և զամենայն տունն Շամայ և
« անցին ի Միջագետս Ասորոց և բազում
« միմբս գործեցին ի քրիստոնեայս, ուր
« և հասանին յամենայն տեղիս: Եւ ա-
« րեամբ քրիստոնէից շաղախեցին զամե-
« նայն երկիր: Եւ ելին յաշխարհն Հայոց
« բզնունեաց և զնոյն կո-



« տորութիւն առնէին, Ապա զթացեալ Մուհա-
 « մատն արար շաղաւաթ, և երարծ զսուրն
 « ի Հայոց և արար զնոսս ի կամս ա-
 « պատան, զի համարձակ պաշտօնցին
 « զթիստոս կատուած և տայցեն զջղայն:
 « Զայ օրէն ի Խոլաթ քաղաք եղին ի գա-
 « ւան թզնունեաց, Խոկ միւս Մահմեան
 « էանց զհրամանս աւրէնսպրին իւրեանց
 « զառաշխն Մահմետին և նեղէր զըրիս-
 « տանեայն տաճկանաւ, Որը ոչ հաւա-
 « նեցան, որոց սուր ի վերայ եղեալ կո-
 « տորեաց զրազումն ի Հայոց և յԱսորոց
 « ի Միջազետու և ի Մելտենի մինչեւ ի
 « Բանունիս և յԱղոյովիտն որ է Արձէ:
 « Եւ ի Մելտենի զզիւաւոր քաղաքին ազգի
 « ազգի և շարաշար հարուածովց եսպան
 « վասն հաւատոյս Քրիստոսի, և չարկ գէշ
 « զազանաց, ուր բնա ոչ մերձեցան և ոչ
 « ապականեցան մարմինց նոյս զաւուրս
 « զառասուն: Այլ բուրէր ի նոցանէ հոտ
 « անուզութեան: Եւ յայնմանէ քաջալերեալ
 « յորդորեցան հազարը և բիւրը ի մար-
 « տիրոսութիւն, որը հնահատակալը մե-
 « ռան աշխալիս և ի Քրիստոս կենդա-
 « ռացան »....:

Ա. Կ.

Հալէպու Քառու, Մանկ. Եկեղեցւոյ Զե-
 « ռազրաց Մատենազարանի թիւ 21 Զեռա-
 « զիր (թղթեայ, բոլորագիր Զի թուակիր)
 Աւետարանն ունի հետեւալ յիշատակա-
 րանները:

Յիշատակարան Ա.
 (յէլ, 591)

« Փառք երից անբաւից, անհասանե-
 « լիաց. Սրբոյ Երրորդութեանն, Երից
 « անձանց և մի Աստուածութեանն, հաւը
 « և որդոյ և սուրբ հոգւոյն այժմ և յա-
 « փտեան, և յաւիտեանս յաւիտենից ա-
 « մէն, ամէն, ամէն:

« Գրեցաւ Մուրը Աւետարանս ի մեծա-
 « հոչակ ուխտս Մաշկեւորս, ի թուակա-
 « նիս Զի. ի հայրապետութեան տեառն

« կոստանդիայ, և ի թագաւորութեանն
 « Հէթմոյ որդուոյ կոստանդիայ, յայնմ
 « ամի՞ որ զՀալապն եառ, և զրազում
 « զաւառս խառնիճազանն ազգն ազարայ:
 « Եւ զրեցաւ ձեռամք կիրակոսի անիմաստ
 « զըշի. ի խնդրոյ հոգեւոր եղբաւը իմոյ
 « յաւսէփ քահանայի, վասն զի ազաշեաց
 « զմեկ զրեկ իւր համար յիշատակ իւր և
 « ձնողաց իւրոց և ամենայն ննջեցելոց
 « զնացելոցն առ միւ: Արդ ոյք աւգափիք
 « ի սմանէ յիշեսջիք զմեզ և զննալոցն
 « մեր և զթէողոս փակակալ, և զստե-
 « փանոս քահանայ որ ազնեցին յոր-
 « դիլն, և ամենեցուն առ հասարակ ողոր-
 « մեսցի յս. քս., և նմա փառց յաւիտեանս
 « ամէն: Խոշորութեան անմեղազիր լիք,
 « զի այսչափ էր կարն. բայց յաւրինակս
 « գստահ լիք, մանաւանդ ի համարայքն
 « որ գիտէ զի ընտիր է»:

Յիշատակարան Բ.

(Աւետարան ներքեւ)

« Զեղկելի կազմաւզու սորա զառացել
 « հնազանդենց, և ծնաւզու և զհարազատն
 « իմ զպաւզոս սարկաւագ և զուսուցիչն
 « իմ զՄարգիս քահանայ զհանգուցեալն
 « առ բրիստոս ազաշեմ յիշեկ ի տէր. ի
 « թզ. Զթ»:

Յիշատակարան Գ.

« Զվերջին կապող սուրբ աւետարանիս
 « որ կապեցի՝ յիշեցէք զիս զանարժան
 « որ զանունս իմ աւազ քահանայ և զոր-
 « ծողա ոչ, զհայրն իմ և զմայրն իմ և
 « զուսուցիչս իմ: Անմեղազիր լերոց սխա-
 « լանաց և խոշորութեան զրոյս, ամէն.
 « Վայ մեղաւորիս, ձ՛ի վայ. եղբարը.
 « ամէն, ամէն, և եղիցի»:

Յիշատակարան Ատացողի
 (յէլ 593)

Յիշատակարանիս առջի մասը պակաս
 լինելուն՝ ստացողին և յիշատակուած վայ-

րին կամ եկեղեցին անունը թէպէտեւ անծանօթ կը մնայ ընթերցողաց՝ սակայն օգտակար նկատեցինք շարունակութիւնը օրինակել ի սարուեւ:

« — և որ ո՞ր յանդզնի և արասցէ բըռ-
« նուժեամբ, ընդ կապանաւը և ընդ պատ-
« ժաւը եղցիք. այլ մնացէ սեփնական
« սր. եկեղեցւոյն որպէս վերոյ ասացաց
« անջալունջ ամենայն կենդանւոյ։ Եւ քա-
« հանայ որ սպասաւոր լիցի Սուրբ եկե-
« ղեցւոյն, զգաստ կացցէ Սր. աւետարա-
« նին՝ իրը աստուծոյ պատզամատորի,
« պահել յամենայն վասակարաց։

« Եւ եթէ ըստ ծովացեալ մեղաց իմոց,
« և ըստ բերման ժամանակին կարիք լինի
« աշխարհի, նայ մատցողն իմ ինամց
« տանին Սր. աւետարանիս ամենայն զի-
« մաւր։ Այդ աղաչեմ զամեննեսեան, ով
« հարց մեր և եղարք, աստուածապատիւ
« քահանայց և համարէն ժողովականնը,
« զի յորժամ աստուածային բարրաւոր
« լսելի լիցին յականջո լսողացդ, թողու-
« թիւն մեղաց խնդրեսջից յաստուծոյ ինձ
« մնջուցելոյս և ծնաւղացն իմոց և եղարց
« և ազգականաց և համայն ընտանեաց
« ննջցելոց և կենդանեաց։ — Դարձեալ
« ևս առաւել աղաչեմ զՍր. քահանայդ
« որ և լիցի սպասաւոր Սր. տաճարիդ,
« զի յամենայն օր երեւելի տանից տէ-
« րունականաց, լսելի արացես ժողովը-
« զիանդ զպաղատանաւը բանս մեր յիշա-
« տակաց, զի վասն այնր յուսոյ եղաւ
« սա ի Սր. եկեղեցից։

« Եւ նա որ ամենաառաւտն է և բազ-
« մարաշլի զյիշատակեալըս և զյիշատա-
« կաւղբդ՝ հանդերձ ամենայն հաւատա-
« ցելովը, ի մեծի աւրն աներէկի, առ
« հասարակ յինքն միացուցէ, և նման
« փառք յաւիտեանս, յաւիտենից, ամէն։

« ընդ նմին և զիս զմեղուցեալ ծառայս,
« զլուստ՝, որ զսակաւ բանքս յիշատա-
« կաց զբցի՝ աղաչեմց յիշել։

« Ի թուին ԶԼԵ եղաւ սա ի սուրբ
« եկեղեցին։» :

Ըստին համագումար Աւետարանիս

18 × 13^{1/2}, մնդ. արեւելեան կազմ
տախտակեայ շազանակագրոյն կաշեպատ
կողբերով, ինչպէս վերոգրեալ Յիշատա-
կարաններէն կը հասկցուի, երեք անգամ
կազմուած։ Զաբակողմին մէկ թերթ թրդ-
թեայ՝ իսկ աշխակողմէն երկու թերթ մա-
զաղաթեայ պահպանակներ են զրուած։
Մազաղաթները Մեսրոպեան միջին տա-
ռերով վարք սրբոցի մասեր կը պարու-
նակին. միոյն վրայ կը կարդանց «Վարք
և վկայուրիհմ կիրակիոս հայրապետին»։
Էջ 3-12 համաձայնութեան տախտակներ
են։

Ձեռագիրս զրուած է յոսի յղկուած
բամպակեայ թղթի վրայ՝ երկսինակ, բու-
լորազիր, իւրաքանչիւր էջ 20 տողերով.
սև թանաբով. Էջը 596։

Ձեռագիրս չունի ո՛չ պատկեր և ո՛չ ալ
լուսանցազարդ։ Էջ 2, կարմիր խորագի-
րով « Եսիիրս կարպեանուի ... » համա-
րաբարպի մասին զրուածը կայ, ինչպէս
ծանօթ է յայլում օրինակս զրչագիր և
տպեալ աւետարանաց։

Տանգուուիք կարմիր զլիսազրով կը սկը-
սին։ Գիրին անճաշակ, բայց տպեալի նման
միօրինակ և միաձեւ։

Հատ զործածուելուն՝ բաւական մաշած
հանգամանց մ'ունի։ — Լուսանցքին վրայ
համարաբարպի համաձայնական համարա-
նիշեր զրուած կան էջերու մէկ քանիին
վրայ։

Աւետարանիս բովանդակութեան տնա-
տութիւնը նշանակելի տարրերութիւն մը
չունին տպեալ օրինակներէն. միայն « Իրք
կեոչն շնացերյն » զրուած է, որպէս ի
բազում ձեռագիր օրինակս, Յովհաննու
Աւետարանին վերջը։